Հարգելի հյուրեր

Այսօր մեծագույն հպարտությամբ և շուքով նշում ենք մեր երկրի ամենակարևոր տոնը՝ Անկախության օրը: Տոն, որն այս տարի հոբելանական է: Այո՝ մեր անկախ հայրենիքն արդեն 25 տարեկան է:

Իր պատմության բոլոր ժամանակներում մեր ժողովուրդը ձգտել է անկախության, որն իրականություն դարձավ 25 տարի առաջ՝ ուղիղ այս օրը: Դարեր շարունակ հանուն անկախության մարտնչել ու իրենց կյանքն են զոհաբերել մեր բազում հայ քաջորդիները: Եվ ահա, արդեն 25 տարի մենք վայելում ենք այնքան բաղձալի անկախությունը: Սեփական ուժերով, հնարավորություններով, տաղանդով ու կամքով արարում ենք մեր երկրի ներկան ու կերտում ապագան:

Հիրավի, հեշտ չի եղել անկախության ձեռքբերումը: Նորանկախ պետության առջև ծառացել են բազում դժվարություններ, որոնց հաղթահարումը միահամուռ ուժ և ներդրում, անսահման սեր ու նվիրվածություն է պահանջել:

Մեր երկիրի սահմանները պաշտպանված են՝ շնորհիվ Հայաստանի զինված ուժերի, բանակ, որ ծնվել է անկախության հետ միաժամանակ: Մեր բանակի կերտման ակունքներում են այն հերոսները, որոնց արյան գնով այսօր ամուր հիմքերի վրա է կանգնած Հայաստանի Հանրապետությունը՝ համայն հայության հայրենիքը: Նրանց գործը անձնվիրաբար շարունակում է այսօրվա՝ անկախության սերունդը: Հավերժ փառք հանուն հայրենիքի ազատության նահատակված բոլոր հերոսներին:

Այսօր, երբ այլևս ետևում են մնացել մաքառման տարիները, երբ հաղթահարված են անկախության առաջին տարիների սոցիալ-տնտեսական դժվարությունները, աշխարհին մենք ներկայանում ենք իբրև ազգային արժանապատվությունը պաշտպանելու հնարավորություններն ու կարողությունները դրսևորող, զոհողությունների գնալու և այդ զոհողությունների գնով համաշխարհային ձեռքբերումներ ունենալու, դրանով իսկ միասնաբար հպարտանալու ունակ երկիր, իբրև հաղթանակած և անպարտելի երկիր:

Անկախության 25 տարիների ընթացքում մեր երկիրը կարողացել է ոչ միայն պաշտպանել իր ինքնությունն ու ապահովել հեղինակության բարձրացումը, այլև կայացնել պետական հաստատուն համակարգ՝ իբրև իրողություն ամրագրելով տեղական ինքնակառավարումը, դնել տնտեսության զարգացման հիմքերը:

Անկախության տարիներին մեծ ձեռքերումների է հասել Արագածոտնի մարզը: Լուրջ ներդրումներ են կատարվել տնտեսության բոլոր բնագավառներում՝ դպրոցաշինության, ճանապարհաշինության, գազիֆիկացման, գյուղատնտեսության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական և այլ ոլորտներում:

Բացվել են խմիչքների արտադրության մի շարք գործարաններ, որոնք իրենց կարողություններով լայն ճանաչում ունեն երկրում և նրա սահմաններից դուրս և որոնք նպաստել են գյուղատնտեսական արտադրանքի մթերմանը, ինչպես նաև՝ նոր աշխատատեղերի բացմանը:

Շնորհիվ կառավարության կողմից իրականացվող հատկացումների, միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների, ներդրումների, մարզում առկա հիմնախնդիրների ավելի քան 70 տոկոսը լուծում է ստացել: Այդուհանդերձ,

դեռևս զերծ չենք որոշակի դժվարություններից ու խնդիրներից, որոնց լուծմանը միտված ծրագրերն ու նախագծերը որոշակի ժամանակ են պահանջում:

Այսօր մենք հպարտանալու շատ առիթներ ունենք, և այդ ամենի հիմքում, նախ և առաջ, անկախության կարգավիճակն է, որ ունի այսօր Հայաստանի Հանրապետությունը: Անկախություն, առանց որի հնարավոր չէ լիարժեքորեն ու իրավահավասար քայլել միջազգային աշխարհում:

Հարգելի տիկնայք և պարոնայք, վերստին շնորհավորում եմ բոլորիս՝ Անկախության տոնի առթիվ: Մաղթում եմ ամենայն բարիք, նորանոր ձեռքբերումներ , երջանիկ ու լուսավոր ապագա:

Կեցցե՛ Հայաստանի անկախ Հանրապետությունը:

Կեցցե՛ ազատատենչ հայ ժողովուրդը: